



Եվրոպական պայմանագրերի շարք – Հ- 112

ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ

Ոչ պաշտոնական թարգմանություն

Ստրասբուրգ, 21 մարտի, 1983թ.

Սույն Կոնվենցիան ստորագրած Եվրոպայի Խորհրդի անդամ և մյուս պետությունները,

Հաշվի առնելով, որ Եվրոպայի Խորհրդի նպատակն է իր անդամ պետությունների միջև միասնության ավելի բարձր մակարդակի հասնելը,

Տոգորված քրեական իրավունքի բնագավառում միջազգային համագործակցությունը զարգացնելու ցանկությամբ,

Գտնելով, որ այդ համագործակցությունը պետք է շարունակի ծառայել արդարության և դատապարտյալների սոցիալական վերականգնման նպատակներին,

Գտնելով, որ այդ նպատակները պահանջում են, որպեսզի այն օտարերկրացիները, որոնք հանցագործություն կատարելու արդյունքում զրկված են իրենց ազատությունից, հնարավորություն ունենան կրելու իրենց պատիժները իրենց սեփական հասարակության մեջ,

Եվ գտնելով, որ այդ նպատակին հասնելու ամենաարդյունավետ միջոցը այդ անձանց իրենց երկրներ փոխանցելն է,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1 – Սահմանումներ

Սույն Կոնվենցիայի նպատակների համար՝

ա. “պատիժ”՝ նշանակում է ազատազրկման հետ կապված ցանկացած պատիժ կամ միջոց, որը անորոշ կամ որոշակի ժամկետով նշանակվում է դատարանի կողմից հանցագործություն կատարելու համար,

բ. “դատավճիռ”՝ նշանակում է պատիժ սահմանող դատարանի որոշում կամ հրաման,

գ. “Դատապարտող պետություն”՝ նշանակում է այն պետությունը, որի տարածքում պատիժ է նշանակվել այն անձի նկատմամբ, որը կարող է փոխանցվել կամ փոխանցվել է,

դ. “Կատարող պետություն”՝ նշանակում է այն պետությունը, որին կարող է փոխանցվել կամ փոխանցվել է դատապարտյալը՝ պատիժը կրելու նպատակով:

Հոդված 2 – Ընդհանուր սկզբունքներ

1. Կողմերը պարտավորվում են միմյանց համար ապահովել դատապարտյալների փոխանցման ուղղությամբ համագործակցություն

առավելագույն չափով՝ սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան:

2. Կողմերից մեկի տարածքում դատապարտված անձը կարող է սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան փոխանցվել մեկ այլ Կողմի՝ նրա նկատմամբ նշանակված պատիժը կրելու համար: Այդ նպատակով նա կարող է իր շահագրգռությունն արտահայտել Դատապարտող կամ Կատարող պետությանը՝ սույն Կոնվենցիայի համաձայն փոխանցման ենթարկվելու համար:

3. Փոխանցումը կարող է հայցվել ինչպես Դատապարտող, այնպես էլ Կատարող պետության կողմից:

Հոդված 3 – Փոխանցման պայմանները

1. Դատապարտյալը սույն Կոնվենցիայի հիման վրա կարող է փոխանցվել միայն հետևյալ պայմանների առկայությամբ՝

ա. եթե այդ անձը Կատարող պետության քաղաքացի է,

բ. եթե դատավճիռը վերջնական է,

գ. եթե փոխանցման մասին խնդրանքն ստանալու պահին պատիժը կրելու համար դատապարտյալին մնացել է առնվազն վեց ամիս ժամկետ կամ պատժի ժամկետն անսահմանափակ է,

դ. եթե փոխանցումը համաձայնեցված է դատապարտյալի հետ կամ երկու Կողմերից որևէ մեկը, ելնելով դատապարտյալի տարիքից, ֆիզիկական կամ հոգեկան վիճակից, անհրաժեշտ է համարում փոխանցումը համաձայնեցնել նրա օրինական ներկայացուցչի հետ,

ե. եթե գործողությունը կամ անգործությունը, որի համար դատավճիռ է կայացվել, հանցագործություն է համարվում Կատարող պետության օրենսդրության համաձայն կամ այդպիսին կհամարվեր, եթե հանցագործությունը կատարվեր այդ պետության տարածքում, և

զ. եթե Դատապարտող և Կատարող պետությունների միջև համաձայնություն է ձեռք բերվել փոխանցման վերաբերյալ:

2. Բացառիկ դեպքերում Կողմերը կարող են համաձայնության գալ փոխանցման վերաբերյալ, եթե նույնիսկ դատապարտյալի կողմից կրման ենթակա պատիժը ավելի քիչ է, քան նախատեսված է Կոնվենցիայի 1-ին մասի գ. կետով:

3. Յուրաքանչյուր պետություն ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին վավերագիրն ի պահ հանձնելիս կարող է Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարությամբ նշել, որ մտադիր է բացառել 9-րդ հոդվածի 1-ին մասի ա. և բ. կետերով նախատեսված ընթացակարգերից մեկի կամ մի քանիսի կիրառումը այլ

Կողմերի հետ իր հարաբերություններում:

4. Յուրաքանչյուր պետություն ցանկացած պահի կարող է Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարությամբ սահմանել իրեն վերաբերելի դեպքերում “քաղաքացի” տերմինի բովանդակությունը սույն Կոնվենցիայի նպատակների համար:

Հոդված 4 – Տեղեկատվություն տրամադրելու պարտականությունը

1. Ցանկացած դատապարտյալ, որի նկատմամբ կարող է կիրառվել սույն Կոնվենցիան, Դատապարտող պետության կողմից պետք է տեղեկացվի սույն Կոնվենցիայի էության մասին:

2. Եթե դատապարտյալը Դատապարտող պետությանը հայտնում է սույն Կոնվենցիայի համաձայն փոխանցվելու իր շահագրգռված լինելու մասին, ապա այդ պետությունը դատավճիռը վերջնական դառնալուց հետո ամենասեղմ իրական ժամկետում այդ մասին պետք է տեղյակ պահի Կատարող պետությանը:

3. Այդ տեղեկությունը պետք է ընդգրկի՝

ա. դատապարտյալի անուն, ազգանունը, ծննդյան ամսաթիվն ու վայրը,

բ. Կատարող պետության տարածքում դատապարտյալի բնակության հասցեն՝ վերջինիս առկայության դեպքում,

գ. այն փաստական հանգամանքների շարադրանքը, որոնք դրված են դատապարտման հիմքում,

դ. պատժի բնույթը, տևողությունը և կրման սկիզբը,

4. Եթե դատապարտյալը իր շահագրգռվածության մասին հայտնում է Կատարող պետությանը, ապա Դատապարտող պետությունը, խնդրանքի հիման վրա, պետք է այդ պետությանը փոխանցի սույն հոդվածի 3-րդ մասում նշված տեղեկատվությունը:

5. Դատապարտյալը գրավոր կերպով պետք է տեղյակ պահվի Դատապարտող պետության կամ Կատարող պետության կողմից սույն հոդվածի նախորդ մասերի դրույթներին համապատասխան կատարված ցանկացած գործողության մասին, ինչպես նաև ցանկացած որոշման մասին, որը կկայացվի ցանկացած պետության կողմից փոխանցման մասին խնդրանքի հիման վրա:

Հոդված 5 – Խնդրանքներ և պատասխաններ

1. Փոխանցման մասին խնդրանքները և պատասխանները ձևակերպվում են գրավոր:

2. Խնդրանքները հայցող պետության Արդարադատության նախարարության կողմից փոխանցվում են հայցվող պետության Արդարադատության նախարարությանը: Պատասխանները պետք է հաղորդվեն նույն խողովակներով:
3. Ցանկացած Կողմ կարող է Եվրոպայի Գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարությամբ նշել, որ օգտագործելու է հաղորդակցության այլ խողովակներ:
4. Հայցվող պետությունը հայցող պետությանը պետք է անհապաղ հայտնի հայցվող փոխանցմանը համաձայնության տալու կամ մերժելու մասին որոշման վերաբերյալ:

Հոդված 6 – Ուղեկցող փաստաթղթեր

1. Կատարող պետությունը, այդ մասին Դատապարտող պետության կողմից ներկայացված խնդրանքի առկայությամբ, վերջինիս տրամադրում է՝
 - ա. որևէ փաստաթուղթ կամ հայտարարություն, որտեղ նշվում է, որ դատապարտյալն այդ պետության քաղաքացի է,
 - բ. Կատարող պետության համապատասխան օրենքի պատճենը, որով նախատեսվում է, որ այն գործողությունը կամ անգործությունը, որի համար պատիժ է նշանակվել Դատապարտող պետության կողմից, հանցագործություն է հանդիսանում Կատարող պետության օրենսդրության համաձայն կամ այդպիսին կհամարվեր, եթե կատարված լիներ իր տարածքում,
 - գ. հայտարարություն, որը պարունակում է 9-րդ հոդվածի 2-րդ մասում նշված տեղեկատվությունը:
2. Փոխանցման մասին խնդրանքը ներկայացվելու դեպքում, Դատապարտող պետությունը Կատարող պետությանն է տրամադրում հետևյալ փաստաթղթերը, բացառությամբ եթե երկու պետություններն էլ արդեն իսկ մատնանշել են, որ փոխանցման համաձայնություն չեն տալու՝
 - ա. դատավճռի և վերջինիս կայացման համար հիմք հանդիսացած օրենքի վավերացված պատճենը,
 - բ. հայտարարություն, որտեղ նշվում է պատժի արդեն իսկ կրած ժամկետը, ներառյալ՝ նախնական կալանքի, պատճառաբանի նվազեցման և դատավճռի ի կատար ածմանը վերաբերող ցանկացած գործոնի մասին տեղեկատվություն,
 - գ. հայտարարություն, որտեղ նշվում է 3-րդ հոդվածի 1-ին մասի դ. կետի համաձայն փոխանցման համաձայնություն տալու մասին, և
 - դ. համապատասխան դեպքերում՝ դատապարտյալի վերաբերյալ բժշկական կամ սոցիալական տեղեկանքները, Դատապարտող պետությունում նրա հետ

վարմունքի վերաբերյալ տեղեկատվություն, և ցանկացած առաջարկություն
Կատարող պետությունում նրա նկատմամբ հետագա վարմունքի մասին:

3. Երկու պետություններն էլ կարող են խնդրել իրենց տրամադրել 1-ին և 2-րդ
մասերում վերը նշված ցանկացած փաստաթուղթ կամ հայտարարություն՝ մինչև
փոխանցման մասին խնդրանք ներկայացնելը կամ փոխանցմանը
համաձայնության տալու կամ մերժելու մասին որոշում կայացնելը:

Հոդված 7 – Համաձայնությունը և դրա ստուգումը

1. Դատապարտող պետությունը պետք է համոզվի, որ դատապարտված անձը,
որի համաձայնությունը պահանջվում է 3-րդ հոդվածի 1-ին մասի դ. կետի
համաձայն, այդ համաձայնությունը տալիս է կամավոր և դրա իրավական
հետևանքների լիարժեք իմացությամբ: Այդպիսի համաձայնությունը տալու
ընթացակարգը կարգավորվում է Դատապարտող պետության օրենսդրությամբ:

2. Դատապարտող պետությունը հյուպատոսի կամ Կատարող պետության
հետ համաձայնեցված պաշտոնյայի միջոցով պետք է Կատարող պետությանը
հնարավորություն ընձեռի ստուգելու, որ համաձայնությունը տրվել է 1-ին մասի
վերը նշված պայմաններին համապատասխան:

Հոդված 8 – Փոխանցման հետևանքները Դատապարտող պետության համար

1. Կատարող պետության կողմից դատապարտյալի համար
պատասխանատվություն ստանձնելը հանգեցնում է Դատապարտող
պետությունում պատժի ի կատար ածման կասեցմանը:

2. Դատապարտող պետությունը չի կարող շարունակել պատժի ի կատար
ածումը, եթե Կատարող պետությունը պատիժը համարում է լիովին կրած:

Հոդված 9 – Փոխանցման հետևանքները Կատարող պետության համար

1. Կատարող պետության իրավասու մարմինները՝

ա. անմիջապես կամ դատարանի կամ վարչական մարմնի որոշմամբ
շարունակում են պատժի ի կատար ածումը՝ 10-րդ հոդվածում սահմանված
պայմանների առկայությամբ, կամ

բ. դատական կամ վարչական վարույթի միջոցով փոխարինում են պատիժը
այդ պետության որոշմամբ՝ այդպիսով, Դատապարտող պետությունում
նշանակված պատիժը 11-րդ հոդվածում սահմանված պայմանների առկայությամբ
փոխարինելով նույն արարքի համար Կատարող պետության օրենսդրությամբ
նախատեսված պատժով:

2. Այդ մասին խնդրանի առկայության դեպքում, Կատարող պետությունը մինչև դատապարտյալի փոխանցումը Դատապարտող պետությանը պետք է տեղյակ պահի իր կողմից կիրառվելիք ընթացակարգի վերաբերյալ:
3. Պատժի ի կատար ածումը կարգավորվում է Կատարող պետության օրենսդրությամբ, և այդ պետությունն է իրավասու կայացնելու բոլոր անհրաժեշտ որոշումները:
4. Ցանկացած պետություն, որը մեկ այլ պետության կողմից նշանակված պատիժը ի կատար ածելու նպատակով, իր ազգային օրենսդրության համաձայն չի կարող օգտվել 1-ին մասում նշված ընթացակարգերից՝ այնպիսի անձանց նկատմամբ, որոնք իրենց հոգեկան վիճակի պատճառով չեն կարող պատասխանատվություն կրել հանցագործություն կատարելու համար, և որը պատրաստ է ընդունել այդպիսի անձանց՝ նրանց հետագա խնամքն ապահովելու նպատակով, կարող է Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարությամբ նշել այն ընթացակարգը, որին հետևելու է նման դեպքերում:

Հոդված 10 – Շարունակվող ի կատար ածում

1. Շարունակվող ի կատար ածման դեպքում Կատարող պետությունը կաշկանդված է Դատապարտող պետության կողմից սահմանված պատժի իրավական բնույթով և տևողությամբ:
2. Եթե, սակայն, այդ պատիժն իր բնույթով կամ տևողությամբ անհամատեղելի է Կատարող պետության օրենսդրության պահանջների հետ, կամ եթե դա պահանջվում է վերջինիս օրենսդրությամբ, ապա այդ պետությունը կարող է դատարանի կամ վարչական մարմնի որոշմամբ հարմարեցնել պատիժը այն պատժին կամ միջոցին, որը նմանատիպ արարքի համար նախատեսված է իր սեփական օրենսդրությամբ: Ինչ վերաբերում է բնույթին, ապա պատիժը կամ միջոցը պետք է համապատասխանի նշանակված և ի կատար ածման ենթակա պատժին: Այն չի կարող խստացնել Դատապարտող պետությունում նշանակված պատիժը՝ դրա բնույթի կամ տևողության իմաստով, ոչ էլ կարող է գերազանցել Կատարող պետության օրենսդրությամբ սահմանված առավելագույն պատիժը:

Հոդված 11 – Պատժի փոխակերպումը

1. Պատժի փոխակերպման դեպքում կիրառվում են Կատարող պետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերը: Պատիժը փոխակերպելիս, իրավասու մարմինը՝
 - ա. կաշկանդված է փաստի վերաբերյալ եզրակացություններով, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն բխում են Դատապարտող պետությունում կայացված դատավճռից,
 - բ. չի կարող ազատագրկման հետ կապված պատիժը փոխակերպել գույքային

պատասխանատվության միջոցի,

գ. պետք է հաշվակցի դատապարտյալի կողմից կրած ազատազրկման ամբողջ ժամկետը, և

դ. չպետք է վատթարացնի դատապարտյալի պատիժը կրելու հետ կապված վիճակը, և կաշկանդված չէ պատժի նվազագույն ժամկետով, որպիսին Կատարող պետության օրենսդրությամբ կարող է նախատեսված լինել տվյալ հանցագործության կամ հանցագործությունների կատարման համար:

2. Եթե փոխակերպման վարույթն անցկացվում է դատապարտյալին փոխանցելուց հետո, ապա Կատարող պետությունը այդ անձին պետք է պահի կալանքի տակ կամ այլ կերպ երաշխավորի նրա ներկայությունը Կատարող պետությունում մինչև վարույթի լուծումը:

Հոդված 12 – Ներում, համաներում, պատժի մեղմացում

Յուրաքանչյուր պետություն կարող է ներում, համաներում կամ պատժի մեղմացում շնորհել իր Սահմանադրությանը և այլ օրենքներին համապատասխան:

Հոդված 13 – Դատավճռի վերանայումը

Դատավճռի վերանայման նպատակով բերված ցանկացած բողոք ենթակա է լուծման միայն Դատապարտող պետության կողմից:

Հոդված 14 – Ի կատար ածման դադարեցումը

Կատարող պետությունը պետք է դադարեցնի պատժի ի կատար ածումը անմիջապես այն բանից հետո, երբ Դատապարտող պետության կողմից տեղյակ է պահվում ցանկացած որոշման կամ միջոցի մասին, որի արդյունքում պատիժը դադարում է կատարման ենթակա լինելուց:

Հոդված 15 – Ի կատար ածման վերաբերյալ տեղեկատվությունը

Կատարող պետությունը Դատապարտող պետությանը տեղյակ է պահում պատժի ի կատար ածման մասին՝

ա. երբ գտնում է, որ պատժի ի կատար ածումն ավարտվել է,

բ. եթե դատապարտյալը մինչև պատժի վերջնական ի կատար ածումը փախուստի է դիմել ազատազրկման վայրից, կամ

գ. եթե հատուկ տեղեկանք է պահանջվում Դատապարտող պետության կողմից:

Հոդված 16 – Տարանցում

1. Պետությունը պետք է իր օրենսդրությանը համապատասխան բավարարի դատապարտյալին իր տարածքով տարանցելու մասին խնդրանքը, եթե այդ խնդրանքը ներկայացվել է մեկ այլ պետության կողմից և այդ պետությունը այլ պետության կամ երրորդ պետության հետ համաձայնվել է, որպեսզի այդ անձը փոխանցվի իր տարածքից կամ դեպի իր տարածք:
2. Պետությունը կարող է մերժել տարանցման մասին խնդրանքը, եթե՝
 - ա. դատապարտյալը իր քաղաքացի է, կամ
 - բ. հանցանքը, որի համար նշանակվել է պատիժը, հանցագործություն չի համարվում իր սեփական օրենսդրության համաձայն:
3. Տարանցման մասին խնդրանքները և դրանց պատասխանները պետք է հաղորդվեն 5-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի դրույթներում նախատեսված խողովակներով:
4. Պետությունը կարող է բավարարել իր տարածքով դատապարտյալին տարանցելու մասին երրորդ կողմի խնդրանքը, եթե այդ պետությունը մեկ այլ պետության հետ համաձայնվել է, որպեսզի այդ անձը փոխանցվի իր տարածքից կամ դեպի իր տարածք:
5. Այն կողմը, որին խնդրանք է ներկայացվել տարանցումը թույլատրելու մասին, կարող է դատապարտյալին կալանքի տակ պահել միայն այնքան ժամանակ, որքան պահանջվում է իր տարածքով տարանցում կատարելու համար:
6. Այն կողմին, որին խնդրանք է ներկայացվել տարանցումը թույլատրելու մասին, կարող է խնդրանք ներկայացվել երաշխիքներ տրամադրելու առ այն, որ դատապարտյալը չի ենթարկվի հետապնդման կամ չի կալանավորվի՝ բացառությամբ նախորդ մասում նախատեսված դեպքերի, կամ որ նրա ազատությունը որևէ կերպ չի սահմանափակվի տարանցիկ պետության տարածքում՝ նախքան Դատապարտող պետության տարածքից մեկնելը նրա կողմից կատարված հանցագործության համար կամ նշանակված պատժի համաձայն:
7. Տարանցման մասին խնդրանք չի ներկայացվում, եթե փոխադրումն անց է կացվում պետության օդային տարածքով և չվերթի համաձայն որևէ վայրէջք նախատեսված չէ: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր պետություն կարող է ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին վավերագիրն ի պահ հանձնելիս Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարությամբ պահանջել, որպեսզի այն տեղյակ պահվի իր տարածքով նման տարանցում կատարելու ցանկացած դեպքի մասին:

Հողված 17 – Օգտագործվող լեզուն և ծախսերը

1. 4-րդ հոդվածի 2-4-րդ մասերով նախատեսված տեղեկատվությունը պետք է տրամադրվի այն Կողմի լեզվով, որին այն հասցեագրված է կամ Եվրոպայի Խորհրդի պաշտոնական լեզուներից որևէ մեկով:
2. Հաշվի առնելով 3-րդ մասով նախատեսված դեպքերը, փոխանցման մասին խնդրանքների և ուղեկցող փաստաթղթերի թարգմանություն չի պահանջվում:
3. Յուրաքանչյուր պետություն կարող է ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին վավերագիրն ի պահ հանձնելիս Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարությամբ պահանջել, որպեսզի փոխանցման մասին խնդրանքները և ուղեկցող փաստաթղթերն ուղեկցվեն թարգմանությամբ՝ իր լեզվով կամ Եվրոպայի Խորհրդի պաշտոնական լեզուներից որևէ մեկով կամ Եվրոպայի Խորհրդի որևէ այլ լեզվով, որը կնշվի պետության կողմից: Այդ կապակցությամբ վերջինս կարող է հայտնել իր պատրաստակամությունը ի հավելումն Եվրոպայի Խորհրդի պաշտոնական կամ որևէ այլ լեզվով ներկայացված թարգմանության ընդունել նաև ցանկացած այլ լեզվով կատարված թարգմանություններ:
4. Բացառությամբ 6-րդ մասի 2-րդ մասի ա. կետով նախատեսված դեպքերի, սույն Կոնվենցիայի կիրառման ընթացքում ներկայացվող փաստաթղթերի վավերացում չի պահանջվում:
5. Սույն Կոնվենցիայի կիրառման ընթացքում առաջացած բոլոր ծախսերը հոգում է Կատարող պետությունը՝ բացառությամբ բացառապես Դատապարտող պետության տարածքում առաջացած ծախսերի:

Հողված 18 – Ստորագրումը և ուժի մեջ մտնելը

1. Սույն Կոնվենցիան բաց է Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների ստորագրման համար և անդամ չհանդիսացող այն պետությունների ստորագրման համար, որոնք մասնակցել են դրա մշակմանը: Այն ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման: Վավերացման, ընդունման կամ հաստատման մասին վավերագրերն ի պահ են հանձնվում Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին:
2. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում սույն հոդվածի 7-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին համապատասխան սույն Կոնվենցիայով պարտավորված լինելու մասին Եվրոպայի Խորհրդի անդամ երրորդ պետության կողմից իր համաձայնությունն արտահայտելու պահից հետո եռամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրվանից:
3. Ցանկացած պետության համար, որը հետագայում կհայտնի Կոնվենցիայով պարտավորված լինելու մասին իր համաձայնությունը, Կոնվենցիան ուժի է մտնում

ստորագրման կամ վավերացման, ընդունման կամ հաստատման վավերագիրն ի պահ հանձնելու պահից մեկ հետո եռամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրվանից:

Հոդված 19 – Ոչ անդամ պետությունների միանալը

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեն կարող է հրավիրել Եվրոպայի Խորհրդի ցանկացած անդամ չհանդիսացող և 18-րդ հոդվածի 1-ին մասում չնշված պետությանը միանալու սույն Կոնվենցիային՝ պայմանով, որ այդպիսի որոշումն ընդունված է Եվրոպայի Խորհրդի Կանոնադրության 20-րդ հոդվածի դ. կետով նախատեսված ձայների մեծամասնությամբ և Կոմիտեի անդամության իրավունք ունեցող Պայմանավորվող պետությունների ներկայացուցիչների կողմից՝ միաձայն:
2. Յուրաքանչյուր միացող պետության համար սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում միանալու մասին վավերագիրը Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու օրվանից հետո եռամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 20 – Տարածքային կիրառումը

1. Յուրաքանչյուր պետություն կարող է ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին վավերագիրն ի պահ հանձնելիս նշել այն տարածքը կամ տարածքները, որոնց նկատմամբ կիրառվելու է սույն Կոնվենցիան:
2. Յուրաքանչյուր Կողմ կարող է ցանկացած հետագա պահի Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարությամբ սույն Կոնվենցիայի կիրառումը տարածել հայտարարության մեջ նշված որևէ այլ տարածքի կամ տարածքների նկատմամբ: Նման տարածքի համար սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդպիսի հայտարարությունը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալու օրվանից հետո եռամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրը:
3. Նախորդ երկու կետի հիման վրա արված ցանկացած հայտարարություն կարող է Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցմամբ հետ վերցվել այդ հայտարարության մեջ նշված որևէ տարածքի առնչությամբ: Հետ վերցնելը ուժի մեջ է մտնում այդպիսի ծանուցումը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալու օրվանից հետո եռամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 21 – Կիրառումը ժամանակի մեջ

Սույն Կոնվենցիան ենթակա է կիրառման նրա ուժի մեջ մտնելուց առաջ և հետո ընկած ժամանակահատվածում նշանակված պատիժների նկատմամբ:

Հոդված 22 – Հարաբերակցությունը այլ կոնվենցիաների և համաձայնագրերի հետ

1. Սույն Կոնվենցիան չի ազդում այն իրավունքների և պարտավորությունների վրա, որոնք բխում են հանձնման կամ քրեական գործերով միջազգային համագործակցության այլ պայմանագրերից, որոնք նախատեսում են կալանավորված անձանց փոխանցումը առերեսման կամ վկայություն տալու նպատակով:
2. Եթե երկու կամ ավելի Կողմ արդեն իսկ կնքել են դատապարտյալների փոխանցման մասին համաձայնագիր կամ պայմանագիր կամ որևէ այլ կերպ են ամրագրել իրենց հարաբերությունները սույն հարցի առնչությամբ, կամ պատրաստվում են նշվածը անել ապագայում, ապա նրանք իրավունք ունեն կիրառելու այդ համաձայնագիրը կամ պայմանագիրը կամ համապատասխան կարգավորում տալու այդ հարաբերություններին՝ սույն Կոնվենցիայի փոխարեն:
3. Սույն Կոնվենցիան չի սահմանափակում Քրեական դատավճիռների միջազգային վավերականության մասին Եվրոպական կոնվենցիայի Կողմ պետությունների իրավունքը կնքելու միմյանց միջև երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրեր՝ այդ Կոնվենցիայով կարգավորվող հարցերի առնչությամբ՝ այն լրացնելու կամ դրանում ամրագրված սկզբունքների կիրառումը հեշտացնելու նպատակով:
4. Եթե փոխանցման մասին խնդրանքի վրա տարածվում է ինչպես սույն Կոնվենցիան, այնպես էլ Քրեական դատավճիռների միջազգային վավերականության մասին Եվրոպական կոնվենցիան կամ դատապարտյալների փոխանցման վերաբերյալ որևիցե այլ համաձայնագիր կամ պայմանագիր, ապա հայցող պետությունը, խնդրանքը ներկայացնելիս, պետք է նշի այն իրավական գործիքը, որի հիման վրա ներկայացվում է խնդրանքը:

Հոդված 23 – Հաշտության համաձայնություն

Եվրոպայի Խորհրդի Հանցավորության հիմնախնդիրների Եվրոպական կոմիտեն տեղյակ է պահվում սույն Կոնվենցիայի կիրառման մասին և անում անհրաժեշտ ամեն ինչ՝ բոլոր այն դժվարությունները խաղաղ կերպով լուծելու ուղղությամբ, որոնք կարող են առաջ գալ դրա կիրառման հետ կապված:

Հոդված 24 – Անդամությունը չեղյալ հայտարարելը

1. Յուրաքանչյուր Կողմ կարող է ցանկացած ժամանակ Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցման միջոցով դադարեցնել իր անդամությունը սույն Կոնվենցիային:

2. Այդպիսի հայտարարությունն ուժի մեջ է մտնում այդ ծանուցումը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալու օրվանից հետո եռամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրը:

3. Սույն Կոնվենցիան, սակայն, շարունակում է կիրառվել այն դատապարտյալների նկատմամբ նշանակված պատիժն ի կատար ածելու նկատմամբ, որոնք սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան փոխանցվել են մինչև նման անդամությունը չեղյալ հայտարարելու մասին արված հայտարարությունն ուժի մեջ մտնելը:

Հոդված 25 – Ծանուցումներ

Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարը Եվրոպայի Խորհրդի անդամ Պետություններին, սույն Կոնվենցիայի մշակմանը մասնակցած անդամ չհանդիսացող պետություններին և սույն Կոնվենցիային միացած ցանկացած այլ պետությանը ծանուցում է.

ա. յուրաքանչյուր ստորագրման մասին,

բ. վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին վավերագիրն ի պահ հանձնելու յուրաքանչյուր դեպքի մասին,

գ. սույն Կոնվենցիան՝ 18-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, 19-րդ հոդվածի 2-րդ մասի և 20-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն ուժի մեջ մտնելու յուրաքանչյուր ամսաթվի մասին,

դ. սույն Կոնվենցիային առնչվող յուրաքանչյուր այլ փաստաթղթի, հայտարարության, ծանուցման կամ հաղորդման մասին:

Ի վկայություն որի՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է Ստրասբուրգում, 1983թ. մարտի 21-ին, մեկ օրինակով, անգլերենով և ֆրանսերենով, երկու տեքստ էլ՝ հավասարազոր, որոնք ի պահ են հանձնվում Եվրոպայի Խորհրդի արխիվին: Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարը հաստատված պատճեններն ուղարկում է Եվրոպայի Խորհրդի անդամ բոլոր երկրներին, սույն Կոնվենցիայի մշակմանը մասնակցած ոչ-անդամ պետություններին և սույն ցանկացած այլ պետությանը, որին հրավիրվել է միանալու սույն Կոնվենցիային: